ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
23 սեպտեմբերի 2022 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9/1Ա
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 9-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 48 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալ Ստեփան Մաչյանը, Սուրեն Գրիգորյանը, Գևորգ Սիմոնյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սեյրան Մեջլումյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Գարիկ Բարսեղյանը, Արամ Դանիելյանը, Մերի Մարգարյանը, Կորյուն Մկրտչյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը, առողջապահության վարչության պետի պաշտոնակատար Յակով Ասատրյանը, մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը, առևտրի և ծառայությունների վարչության պետ Հովիկ Սաֆարյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը, կոմունալ տնտեսության վարչության պետի տեղակալ Կամո Բադանյանը, զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Արմեն Հարությունյանը:

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը հայտնեց, որ 2022 թվականի սեպտեմբերի 23-ի արտահերթ նիստի օրակարգից հանում է օրակարգի 3-րդ՝ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», 5-րդ հարցը՝ «Երևան քաղաքի 2023-2025թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին», 14-րդ հարցը՝ «Երևան համայնքի սեփականություն համարվող Հ. Մանանդյան փողոցի հ.3 շենքի հ.10 բնակարանն անհատույց օտարելու մասին» և 20-րդ հարցը՝ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» (Մ. Բաբաջանյան հ.119 և 119/2 հասցեներ) ավագանու որոշումների նախագծերը:

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի արտահերթ նիստի օրակարգը և ընթացակարգը, որի համար հիմք է հանդիսանում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 30-րդ հոդվածը.

1) Տիգրան Ավինյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին:
2) Գույքը որպես նվիրաբերություն ընդունելու մասին:
3) Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4) Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի հունիսի 21-ի N 613-Ա որոշման մեջ փոոխություններ կատարելու վերաբերյալ:
5) Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N498-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:
6) Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին:
7) Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին:
8) Գույք նվիրաբերելու մասին:
9) Երևան համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին:
10) Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունների փոփոխությունները հաստատելու մասին:
11) Երևանի քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N498-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
12) Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
13) Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
14) Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
15) Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
16) Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:
17) Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:
18) Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու և նպատակային նշանակությունները փոխելու մասին:
19) Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Տիգրան Ավինյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին:

Երևանի քաղաքապետի տեղակալի թեկնածությունը ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 8 անդամ.

1. Անի Խաչատրյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

2. Տիգրան Գալստյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Դավիթ Զախարյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Հայկ Միրզոյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5. Արման Բաբաջանյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

6. Սերգեյ Գյոզալյան – Երևան քաղաքի ավագանու անդամ

7. Գառնիկ Վարդանյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

8. Վահե Գևորգյան - Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալի թեկնածու Տիգրան Ավինյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Տիգրան Ավինյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Զաքարյան – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալի թեկնածու Տիգրան Ավինյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տիգրան Ավինյանին նշանակել Երևանի քաղաքապետի տեղակալ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 46 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 44, դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

2. ԼՍԵՑԻՆ - Գույքը որպես նվիրաբերություն ընդունելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Արման Բաբաջանյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Միքայել Մանրիկյան- Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

3. Արթուր Իսպիրյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հր. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Գույքը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Դավիթ Խաժակյան-Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար
2. Անի Խաչատրյան- Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար
3. Թեհմինա Վարդանյան- Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Հր. Սարգսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Որպես նվիրաբերություն ընդունել «Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամի սեփականությունը հանդիսացող Երևանի Կասկադ համալիրի զբաղեցրած հողամասի չկառուցապատված մասը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 48 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 46, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

3. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Դիանա Քերոբյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի մասին» N 497-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-5 հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 36 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 36, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

4. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի հունիսի 21-ի N 613-Ա որոշման մեջ փոոխություններ կատարելու վերաբերյալ:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Դիանա Քերոբյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի հունիսի 21-ի N613-Ա որոշման մեջ փոոխություններ կատարելու վերաբերյալ» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու՝ 2022 թվականի հունիսի 21-ի «Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին» 613-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին կետում «ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղամաս թիվ 19/3» բառերը փոխարինել «ք.Երևան, Դավթաշեն 3-րդ թաղամաս, 23/1 շենք, 7/1 տարածք (սեփ. վկ. N 29082022-01-0108)» բառերով.

2) հավելվածի «Դավթաշենի կանաչապատում» ՓԲԸ» բաժնի «Ք.Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ., թիվ 19/3 հասցեում գտնվող 67.2քմ տարածք» բառերը փոխարինել «Ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղամաս, 23/1 շենք, 7/1 հասցեում գտնվող 67.2քմ տարածք (սեփ. վկ. N 29082022-01-0108)» բառերով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 35 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

5. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N498-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Տարոն Մարգարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Մարկոս Հարությունյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հր. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2021

թվականի դեկտեմբերի 28-ի N498-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1.Անի Խաչատրյան – Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2022 թվականի ծրագրի վերաբերյալ» N 498-Ն որոշման 2-րդ կետը լրացնել նոր 7-րդ ենթակետով.

«7) ինքնակամ կառույցների օտարման կամ օգտագործման տրամադրելու հետ կապված հարաբերություններն ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմանը համապատասխան:»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 42 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 42, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

6. ԼՍԵՑԻՆ - Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Արմեն Հարությունյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Արման Անտոնյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Միքայել Մանրիկյան – Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար
3. Դիանա Քերոբյան – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Արմեն Հարությունյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Դիանա Քերոբյանը տեղեկացրեց, որ «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

«Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հր. Սարգսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող «ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագրի շրջանակում թվով 97 բազմաբնակարան շենքի տանիքներին տեղադրած արևային ֆոտովոլտային համակարգերը, բոլոր շենքերի ներշենքային, աստիճանավանդակային հատվածներում տեղադրված լուսադիոդային լուսատուները, ինչպես նաև բակային լուսավորության համակարգը՝ ընդհանուր 448,394,005.00 ՀՀ դրամ սկզբնական արժեքով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել 97 բազմաբնակարան շենքերի սպասարկումն իրականացնող 41 համատիրություններին 20 տարի ժամկետով՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ համատիրությունների նախագահների հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 45 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 44, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

7. ԼՍԵՑԻՆ - Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետի տեղակալ Կամո Բադանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Լևոն Զաքարյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Սերգեյ Գյոզալյան- Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հր. Սարգսյանը և աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետի տեղակալ Կ. Բադանյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Դիանա Քերոբյանը տեղեկացրեց, որ «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Անի Խաչատրյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող թվով 54 վերելակ անհատույց օգտագործման իրավունքով անժամկետ տրամադրել Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 45 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

8. ԼՍԵՑԻՆ - Գույք նվիրաբերելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Գույք նվիրաբերելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

«Գույք նվիրաբերելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հր. Սարգսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան համայնքի սեփականություն համարվող ընդհանուր 2504.9 հազ. (երկու միլիոն հինգ հարյուր չորս հազար ինը հարյուր) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով երաժշտական գործիքները, Գյումրու համայնքապետարանի «Անի» փողային նվագախումբ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից օգտագործելու նպատակով նվիրաբերել Գյումրի համայնքին՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ Գյումրու համայնքապետարանի հետ կնքել նվիրաբերության պայմանագիր:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 42 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 42, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

9. ԼՍԵՑԻՆ - Երևան համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և ծառայությունների վարչության պետ Հովիկ Սաֆարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Արմեն Ներսիսյան-Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հր. Սարգսյանը և աշխատակազմի առևտրի և ծառայությունների վարչության պետ Հ. Սաֆարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Դիանա Քերոբյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Մարկոս Հարությունյան - Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

Ելույթի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հր. Սարգսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սահմանել Երևան համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 47 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

10. ԼՍԵՑԻՆ - Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունների փոփոխությունները հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետի պաշտոնակատար Յակով Ասատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Միքայել Մանրիկյան-Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Գևորգ Սիմոնյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Դիանա Քերոբյանը տեղեկացրեց, որ «Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունների փոփոխությունները հաստատելու մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1) Հաստատել Երևանի ենթակայության «Նոր Արաբկիր» առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Հաստատել Երևանի ենթակայության «Նոր Արեշ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն N 2 հավելվածի:

3) Հաստատել Երևանի ենթակայության «Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն N 3 հավելվածի:

4) Հաստատել Երևանի ենթակայության «Թիվ 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն N 4 հավելվածի:

5) Հաստատել Երևանի ենթակայության «Թիվ 17 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն N 5 հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 39 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 32, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

11.ԼՍԵՑԻՆ - Երևանի քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N498-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Դիանա Քերոբյանը տեղեկացրեց, որ «Երևանի քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N498-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2022 թվականի ծրագրի վերաբերյալ» N498-Ն որոշման հաստատված ծրագրի 6-րդ գլուխը լրացնել նոր 26-55-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 39 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 39, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

12. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Արմեն Ներսիսյան-Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հր. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Արցախի փողոց h.14գ հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած, պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 242.39քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը սահմանել «բնակավայրերի»:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 43 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

13. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Վահե Գևորգյան-Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Հ. Մելքումովի փողոցի հ.78/12 հասցեում գտնվող Արմեն Սաֆարյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.03052021-01-0255 վկայական, գաղտնաբառ՝ G9J8CNRYQFGS) 329.52քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 43 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 6

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

14. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Անի Խաչատրյան-Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Ադոնցի փողոցի հ.21/3 և հ.21 հասցեներում գտնվող և «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ին /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.04022022-01-0042 վկայական/ և Ռազմիկ Բաղալյանին /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքների պետական

գրանցման հ.2760313 վկայական/ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 756.4.քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 43 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 39, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

15. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հր. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Արղության փողոցի հ.22/3 հասցեում գտնվող 76.64քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «բնակավայրերի» կատեգորիայի հողերից փոխադրել «էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 39 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

16. ԼՍԵՑԻՆ - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Ռաֆֆու փողոցի հ.հ.111/35 և 111/41 հասցեներում գտնվող սեփականության իրավունքով Վահե Չիլինգարյանին պատկանող համապատասխանաբար 1.5հա և 0.9հա մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխությունները 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 40 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 36, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

17. ԼՍԵՑԻՆ - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցիվերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հր. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների

տրամադրման կարգը սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի մի շարք հասցեներում գտնվող թվով 5 պոմպակայանների և թվով 4 խորքային հորերի զբաղեցրած հողամասերը փոխադրել «էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիա՝ համաձայն հավելվածի:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 40 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 38, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

18. ԼՍԵՑԻՆ - Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու և նպատակային նշանակությունները փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու և նպատակային նշանակությունները փոխելու մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Համաձայնություն տալ՝ սեփականության իրավունքով «Ջոլի Ֆեմիլի» ՍՊԸ-ին պատկանող Նոր Նորք վարչական շրջանի, Հ.Թևոսյան փողոցի հ.1/8 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 61.87քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 30.04.2021թ. հ.11052021-01-0116 /գաղտնաբառ՝ BMCPTAVABKJD/ վկայական) Հ. Թևոսյան փողոցի հ.հ.1/5 և 1/7 հասցեների միջանկյալ հատվածում գտնվող, Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 61.87քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

2. Հ. Թևոսյան փողոցի հ.հ.1/5 և 1/7 հասցեներում գտնվող սեփականության իրավունքով «Ջոլի Ֆեմիլի» ՍՊԸ-ին պատկանող համապատասխանաբար 0.293813հա,

0.174975հա մակերեսներով, ինչպես նաև Երևան համայնքին պատկանող 61.87քմ մակերեսով հողամասերի նպատակային նշանակությունները փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 42 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 38, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

19. ԼՍԵՑԻՆ - Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Դիանա Քերոբյանը տեղեկացրեց, որ «Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Որպես նվիրատվություն ընդունել ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի հ.662-Ա որոշմամբ անհատույց սեփականության իրավունքով Երևան համայնքին փոխանցվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերը և դրանց վրա առկա շենք-շինությունները՝ համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի հ.662-Ա որոշման անբաժանելի մաս կազմող հ.հ.1, 2, 3 հավելվածների:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի հ.662-Ա որոշման 2-րդ կետով սահմանված նվիրատվության պայմանագրերի կնքման գործընթացը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 42 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 41, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կազմեց՝
Ն. Ղուկասյան